

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՕՍՔ

2014 Մայիսի 18-20ը Իտալիայի Վենետիկ քաղաքի Մուրատ-Ռափայելեան վարժարանում տեղի ունեցավ միջազգային գիտաժողով՝ նուիրուած պատմաճարտարապետական եւ պատմամշակութային արժէքների պահպանմանը եւ վերականգնմանը:

Գիտաժողովի ընտրութեան վայրը պատմամշակութային կարեւոր խորհուրդ ունի Վենետիկի Ս. Ղազար կղզում հիմնադրուած Մխիթարեան Միաբանութիւնը հայ մշակոյթի դարբնոցն է, իսկ Մուրատ-Ռափայելեան վարժարանը՝ հայոց դարաւոր դպրութեան նշանաւոր օջախներից մէկը: Մխիթարեան Միաբանութեան երեւելի հայրերը ստեղծել են մնայուն արժէքներ գիտութեան եւ մշակոյթի ամենատարբեր բնագաւառներում, իսկ Մուրատ-Ռափայելեանի սաները հայոց հանճարի տաւիղը հնչեցրել են համայն Եվրոպայում: Վենետիկ ժամանելով՝ հայ մտաւորականները իւրայատուկ տուրք մատուցեցին իրենց մշակութային արմատներին...

Գիտաժողովի տեղի ընտրութեամբ մէկ անգամ եւս արժեւորուած է հայոց հոգեւոր կենտրոնի գործունէութիւնը Հայաստան աշխարհից դուրս...

Վենետիկեան գիտաժողովը կազմակերպել են Ճարտարապետութեան եւ շինարարութեան Հայաստանի ազգային համալսարանը, Իտալիայի Հանրապետութիւնում Հայաստանի Հանրապետութեան դեսպանութիւնը եւ Ս. Ղազար կղզում գործող Մխիթարեան Միաբանութիւնը: Գիտաժողովը նուիրուած է Հայաստանի պատմաճարտարապետական եւ պատմամշակութային արժէքների պահպանմանը եւ վերականգնմանը. մասնաւորապէս՝ եկեղեցիների եւ վանական համալիրների վերականգնման ճարտարապետական լուծումներին եւ այդ բնագաւառում կատարուող հսկայածաւալ աշխատանքներին:

Գիտաժողովի բացմանը նախորդեց Սուրբ Ղազար կղզում կազմակերպուած Սուրբ եւ անմահ Պատարագը, նուիրուած բո-

լոր հայազգի ճարտարապետների հոգիների հանգստեան: Գիտա-
ժողովի բացումը տեղի ունեցաւ միաբանութեան հիմնադիր Մը-
խիթար Սեբաստացու արձանի առջեւ. նա՝ լայն բացած թեւե-
րով, գրկաբաց ընդունեց գիտաժողովի մասնակիցներին: Ողջոյնի
խօսքով հանդէս եկան Միաբանութեան Ընդհանրական Աբբա-
հայր Հայր Եղիա Մայրապետ Վարդապետ Քիլաղպեանը, Իտա-
լիայի Հանրապետութիւնում Հայաստանի Հանրապետութեան ար-
տակարգ եւ լիազոր դեսպան Տիար Սարգիս Վահագնի Ղազա-
րեանը, Ճարտարապետութեան եւ շինարարութեան Հայաստանի
ազգային համալսարանի ռեկտոր Գագիկ Շաղաբեզի Գալստեանը:

Մայիսի 19-20ը Մուրատ-Ռափայէլեան վարժարանում գու-
մարուեցին գիտաժողովի նիստերը: Գիտաժողովին մասնակցում
էին մասնագէտներ Հայաստանից, Իտալիայից եւ Ֆրանսիայից.
նրանցից իւրաքանչիւրը հանդէս եկաւ զեկուցումով՝ ըստ մաս-
նագիտական ուղղութեան: Գիտաժողովի թեմատիկան երկու
ուղղութիւն ունեցաւ. պատմաճարտարապետական և պատմամշա-
կութային:

Պատմաճարտարապետական քեմաներով զեկուցումները վերա-
բերում էին Հայաստանի Քոբայր վանքի որմնանկարների ուսումնասի-
րութեանն ու պահպանմանը (Գայիանէ Կազնատի, համահեղինակներ՝
Աննա Լուքինի եւ Ալեսիա Ռոսսի), Տաթեւի վանական համալիրի ու-
սումնասիրութեան մէջ Ղ. Ալիշանի կատարած դերին (Արտիոմ Գրիգո-
րեան), Հայաստանում յուշարձանների վերականգնման ոլորտում ձեռք-
բերումներին ու արդի խնդիրներին (Գայիանէ Նազլուխանեան), Երե-
ւանում Մխիթար Սեբաստացու չիրականացուած յուշարձանի գեղար-
վեստական առանձնահատկութիւններին (Անի Գրիգորեան), Լեռնային
Ղարաբաղի պատմաճարտարապետական յուշարձանների վերականգնման
գործընթացին (Լիւբա Կիրակոսեան, Արամ Յարութիւնեան), Լմբատա-
վանքի Ս. Ստեփանոս նախավկայ եկեղեցու որմնանկարների կոնսերվա-
տիւ վերականգնմանը (Արա Չարեան, Քրիստին Լամուրէօ), Մարմաշէ-
նի եկեղեցու վերականգնման տեխնիկական ասպեկտներին (Լորենցո
Իւրինա), Հայաստանի ճարտարապետական յուշարձանների վերականգն-
ման փորձին (Գր. Նալբանդեան), Հայաստանում մշակութային ժառան-
գութեան թանգարանացմանը (Նարինէ Մխիթարեան, Աշոտ Սաֆա-
րեան), պատմաճարտարապետական յուշարձանների վերականգնման ժա-
մանակ կոնստրուկտիւ համակարգի հաշուարկման կարեւորութեանը
(Լուիսէ Կարապետեան), յուշարձանների պահպանման եւ վերականգն-
ման ոլորտում ճարտարապետութեան եւ շինարարութեան Հայաստանի

ազգային համալսարանի եւ Միլանի պոլիտեխնիկի համագործակցութեան ներկային ու պապագային (Սարգիս Թովմասեան):

Պատմամշակութային քեմաներով զեկուցումները վերաբերում էին թէ՛ ճարտարապետութեանը եւ թէ՛ պատմական բանասիրութեանը եւ չօշափում էին այդ ոլորտների առանցքային հարցեր:

Պոլսոյ կաթողիկէ հայ համայնքի առաջնորդ՝ արքեպիսկոպոս Լեւոն Զէքիեանի զեկուցումը վերաբերում է հայ ճարտարապետութեան մէջ խորհրդանշանական եւ կրօնական արժէքների դերին, Աշոտ Գրիգորեանի զեկուցումը՝ հայ միջնադարեան ճարտարապետութեան մէջ նախնեաց աշխարհընկալման Ալիշանական մեկնութիւնների դրսեւորումներին, իսկ հայրենի պրօֆ. Լալիկ խաչատրեանի զեկուցումը զուտ բանասիրական թեքում ունի եւ վերաբերում է Միխիթարեան Միաբանութեան բառարանագրական ժառանգութեանն ու նրա դերին հայագիտութեան եւ հայ բառարանագրութեան զարգացման համատեքստում:

Վենետիկեան գիտաժողովը հայ-իտալական բարեկամութեան ամրապնդման գրաւական է, գիտական համագործակցութեան իւրայատուկ անկիւնաքար, որին հաջորդելու են շարունակական գիտաժողովներ՝ նուիրուած պատմամշակութային եւ պատմաճարտարապետական ժառանգութեան պահպանման եւ վերականգնման ամենատարբեր խնդիրներին, հայ-իտալական ճարտարապետական մտքի համատեղ որոնումներին, համաեւրոպական ճարտարապետական նուաճումների փորձի փոխանակմանը եւ այլ հարցերի:

Այդ գիտաժողովում նախապատրաստուեց 2015ի կարեւորագոյն ձեռնարկը՝ Վենետիկում կազմակերպել միջազգային գիտաժողով՝ նուիրուած Հայոց ցեղասպանութեան 100ամեայ տարելիցին:

Վենետիկեան գիտաժողովը հեռահար նպատակներ է հետապնդում. սերտացնել գիտամշակութային կապերը եւրոպական մասնագետների եւ եւրոպական համալսարանների հետ, համագործակցութիւնը դարձնել շարունակական, նրանց հետ համատեղ զբաղուել մարող կրթական հաստատութիւնների վերաբացման եւ Արեւմտան Հայաստանի կիսաւէր եկեղեցիների վերականգնման աշխատանքներով: Այդ աշխատանքները իւրայատուկ բանալի են դառնում աւիրուած եկեղեցիների դռները բանալու ճանապարհին՝ միաժամանակ բացայայտելով այն հանգամանքները, որոնց հետեւանքով հայ ժողովուրդն ապրել է ոչ միայն Ֆիզիքական բնաջնջման արհաւիրք, այլեւ ենթարկուել է մշակութային եղեւնի:

Այդ թեմաներով կազմակերպվող գիտաժողովները, բացի բուն խնդիրները լուծելուց, մի կարեւոր ուղղորւածութիւն եւս ունեն. հասնել Հայ Դատի միջազգայնացմանը՝ ի դէմս հայոց պատմաճարտարապետական կործանուած կառոյցների քարեղէն վկայութիւնների, աշխարհին ցոյց տալ, որ Մոմիկ ճարտարապետի եւ նրա աշակերտների ձեռամբ դարերի ընթացքում կերտուած հայոց քանքարի վկայութիւնները սրախողխող են եղել թուրքական վայրագ եաթաղանով, որ այդ եաթաղանը գործում է անգամ մերօրեայ քաղաքակրթութեան պայմաններում, երբ անխնայ ոչնչացնում է Նոր-Ջուղայի եզակի խաչքարերը, որպէսզի աշխարհին ցոյց տայ, որ այդ տարածքներում միայն անշէն աւերակներ են եղել, եւ ինքն է այդ աւերակների անփառունակ տէրը...

Գիտաժողովի զեկուցումները կոչուած են սթափեցնելու եւրոպացի գիտնականներին, որոնք բանական արարածին յատուկ խղճի մտօք պէտք է իրենց երկրներում, իրենց գիտական ու մըշակութային օջախներում բարձրաձայնեն հայոց խոնարհուած եկեղեցիների, վանքերի, մատուռների եւ պատմաճարտարապետական կառոյցների առասպելը, որպէս լսելի ղօղանջ համայն մարդկութեան...

Գիտաժողովի կազմակերպման աշխատանքներին իրենց գործուն մասնակցութիւնն են բերել Ճարտարապետութեան եւ շինարարութեան Հայաստանի ազգային համալսարանի միջազգային կապերի գծով պրոռեկտոր Վարդգէս Եղոյեանը, համալսարանի միջազգային եւ միջբուհական համագործակցութեան բաժնի պետ Իգիթխանեանը:

Ճարտարապետութեան եւ շինարարութեան Հայաստանի ազգային համալսարանի գործունէութիւնը վաղուց դուրս է եկել հանրապետութեան սահմաններից. նրա գիտակրթական համագործակցութիւնը Եւրոպայի եւ Ջինաստանի նշանաւոր համալսարանների հետ, կանոնաւորապէս կազմակերպվող միջազգային գիտաժողովները՝ պատմաճարտարապետական եւ գիտաուսումնական ամենատարբեր թեմաներով, նոր հորիզոններ են բացում համալսարանի վերելքի ճանապարհին:

Վենետիկեան գիտաժողովը Ճարտարապետութեան եւ շինարարութեան Հայաստանի ազգային համալսարանի գիտական տարեգրութեան փառապանծ էջերից է...